առեալ զգրամն պարտեօք։ Եւ զիջեալ Գրիգորի 'ի Թա-
խանձանս նոցա չոքաւ անդ, և վճարեաց զամենայն պար-
տս նոցա, եւ դեգերեալ 'ի բազում աւուրս 'ի դրունս
այլազգեաց վասն խնդրոյն Երուսաղէմի, չահեցաւ եւ ոչ
ինչ։ Ապա դիմեցին առ դեսպանն Գաղղիոյ և յայտ արա-
րեալ զխնդիրն, աղաչեցին զնա լինել ձեռնտու և օգնա-
կան, զի Յոյնք եւս յառաջադոյն առ սա դիմեալ էին. և
ասի եւս թէ խորհրդով դեսպանին յետս առ Արքայ ըզ-
Խաթթի Շէրիֆն Հայոց։ Իսկ դեսպանն խոստացաւ կա-
տարել զխնդիրս նոցա, բայց ասաց բերել առ ինքն զա-
մենայն վաւերեալ գրեանս, իմանալ զմիտս նոցա, և ըստ
այնմ կարող լիցի վերստին առնուլ զԽաթթի Շէրիֆն, և
տալ Նորոգել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց
'ի դիւանն. զի Յոյնք եղծեալ և արտաքսեալ էին զայնս։
Խոստումնս այս երկարեցաւ ամ մի ողջոյն. զի որքան սոքա
թախանձէին, նա համբերեցէք ասէր, և ոչ այլ ինչ։ Ի սոյն
աւուրս եկն 'ի Կոստանդինուպոլիս Միքայէլ Կաթուղի-
կոսն Սսոյ, եւ իջեւանեցաւ յիւսկիւտար 'ի վանքն Երու-
սաղէմի։ (Հոկտեմբեր 18). դարձաւ 'ի պատերազմէ վէ-
զիրն մեծ առեալ զՊիլկրատ քաղաք, և եմուտ յաղթանա-
կաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ Գրիգոր Պատրիարք եկն
յեկեղեցի Ս. Աստուածածնի վասն գործոց Երուսաղէմի,
ուր լուաւ զմահ Նուիրակ Յարութիւն վարդապետի, վախ-
ճանեալ 'ի վանքն Շնքուշայ։ (1739. 'ի 23 Դեկտեմբերի)
ըստ բանի Դեսպանին 'ի դուռ շարժեցաւ Ռէիզ էֆէնտին՝
որ էր 'ի կողմն Յունաց, և ասէր թէ 'ի Հայոց այսչափ.....
բայց բարութիւն, ինչ ոչ կարացաք առնել։ Հուսկ ուրեմն
միջնորդութեամբ Դեսպանին Գաղղիոյ նորոգեցաւ Խաթթի
Շէրիֆն Հայոց՝ եւ Արքայն վաւերեաց զայն ձեռագրով
իւրով։ Ընդ այս ջախանձարեկ լեալ Յունաց, սկսան դե-
գերիլ այսր և անդր, մանաւանդ թախանձել զԴեսպանն՝
զի որպէս շնորհեաց Արքայ ասեն՝ հրովարտակ Հայոց,
նոյնպէս և մեզ շնորհեսցէ. և զկնի միոյ ամսոյ առին եւ
նոքա զայն։ Բայց հրովարտակք երկուց ազգաց զմի եւ
զնոյն ունին զիմաստս, այսինքն Հայք և Յոյնք զոր ինչ
ունէին յԵրուսաղէմ բաժին ժառանգութեան 'ի սկզբանէ
և այսր, և որպիսի եղանակաւ վարէին անդ զպաշտամունս